Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 19-ի N 331 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29-ի N 350-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

1. Դատարանների և հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ծառայություն) միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է դատարանների և ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման նպատակով ստեղծված էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) կատարողական թերթի, կատարողական վարույթին առնչվող որոշումների, դատական ակտերի, դիմումների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի (այսուհետ միասին՝ փաստաթղթեր) գեներացման (տվյալների մուտքագրման միջոցով ավտոմատ ստեղծման), վերբեռնման (մուտքագրման) և ներբեռնման (էլեկտրոնային համակարգում դիտելու և ստանալու) միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթեր ուղարկելու և ստանալու նպատակով օգտատերը (դատավորը՝ իր աշխատակազմի կամ դատարանը՝ դատարանի աշխատակազմի միջոցով և ծառայությունը՝ իրավասու ստորաբաժանման միջոցով) մուտք է գործում էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային համակարգ մուտք գործելով՝ օգտատերը ստանում է էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթեր դիտարկելու, ներբեռնելու, գեներացնելու, վերբեռնելու (մուտքագրելու) և սույն կարգով նախատեսված՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացմանն ուղղված այլ գործողություններ իրականացնելու իրավասություններ:

3. Գործերի վերաբաշխման դեպքերում իրավասու անձն էլեկտրոնային համակարգում կատարում է անհրաժեշտ նշում դատական գործերի և կատարողական վարույթների շրջանակում ուղարկվող և ստացվող փաստաթղթերը այլ դատավորի փոխանցելու, նրան հասանելի դարձնելու համար:

4. Էլեկտրոնային համակարգ մուտքը կատարվում է անհատական մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով: Յուրաքանչյուր օգտատեր իր անհատական մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով մուտք է գործում էլեկտրոնային համակարգի իր հասանելի տիրույթ, որտեղ արտացոլվում են իրեն մակագրված՝ համապատասխանաբար դատական գործերի և կատարողական վարույթների շրջանակում ուղարկվող և ստացվող փաստաթղթերը:

5. Փաստաթղթերն ուղարկվում են դրանք էլեկտրոնային համակարգում գեներացվելու կամ վերբեռնելու, իսկ ստացվում են էլեկտրոնային համակարգից դրանք ներբեռնելու միջոցով: Փաստաթղթի ուղարկման դեպքում ստացող օգտատերը էլեկտրոնային եղանակով ծանուցվում է փաստաթղթի ստացման մասին:

6. Էլեկտրոնային համակարգով ուղարկված փաստաթղթերի վրա էլեկտրոնային համակարգի կողմից փաստաթղթերի յուրաքանչյուր էջի ներքևի ձախ անկյունում կատարվում է նշում, որը պարունակում է էլեկտրոնային համակարգի անվանումը, ուղարկման ամսաթիվը և ժամը, իսկ ստացման դեպքում՝ աջ անկյունում արտացոլվում են ստացման ամսաթիվը և ժամը:

7. Դատարանի կողմից փաստաթղթի առաջին գեներացման կամ վերբեռնման ժամանակ փաստաթուղթն արտացոլում է դատական գործի համարը, որին առնչվում է այդ փաստաթուղթը: Ծառայության կողմից փաստաթղթի գեներացման կամ վերբեռնման ժամանակ փաստաթուղթն արտացոլում է այն կատարողական վարույթի համարը, որին առնչվում է այդ փաստաթուղթը: Համակարգում գեներացված կամ ներբեռնված յուրաքանչյուր փաստաթուղթ կրում է էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անհատական համար: Էլեկտրոնային համակարգում փաստաթղթերը միմյանց փոխկապակցվում և նույնականացվում են դրանց տրված անհատական համարներով:

8. Համակարգում գեներացվող կամ վերբեռնվող բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ՝ բացառությամբ կցվող, սկանավորված փաստաթղթերի:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ